

Ճոճանակն ու հորը



Exported from Wikisource on 08/25/20

Ճոճանակն ու հորը

Էդգար Ալան Պո

[68] ՃՈՃԱՆԱԿՆ ՈՒ ՀՈՐԸ

Impia
tortorum longas
hic turba furors

Sanguinis innocui,
non satiata, aluit.

Sospite nunc
patria, fracto nunc
funeris antro,

Mors ubi dira fuit,
vita salusque patent^[1].

(Քատատող, որը հորինված է
Փարիզի յակոբինյան ակումբի
տեղում կառուցվելիք շուկայի
դարպասին գրելու համար):

Ես մահու շափ հոգնել և ուժասպառ էի
եղել այդ անվերջ հոգեվարքից: Երբ ինձ
վերջապես արձակեցին և թույլ տվեցին
նստել, ես զգացի, որ գիտակցությունս
արդեն լքում է ինձ: Վերջին խոսքերը,
որոնք ես լսեցի՝ իմ մահվան սուկալի
դատավճռի խոսքերն էին: Հետո
հավատարմանիչների ձայները ձուլվեցին
հեռավոր, անորոշ մի աղմուկի մեջ: Այդ

աղմուկն իմ հոգում պտտման գաղափար առաջացրեց, թերևս որովհետև նման էր պտտվող ջրադացքարերի ձայնին: Քիչ անց ես այլևս ոչինչ չէի լսում: Դրա փոխարեն ես տեսնում էի, և այն էլ ինչպիսի դաժան և չափազանցված պարզությամբ, իմ սևազգեստ դատավորների շուրթերը: Դրանք սպիտակ էին, ավելի սպիտակ, քան այս թուղթը, որին վստահում եմ իմ պատմությունը, և անճոռնիության չափ բարակ՝ անխոցելի համառությունից ու մարդկային վշտերի հանդեպ ունեցած խոժոռ արհամարհանքից սեղմված: Ես տեսնում էի, թե ինչպես էին այդ շուրթերից ծորում իմ բախտը որոշող խոսքերը և ինչպես էին նրանք գալարվում, արտաբերելով իմ մահվան վճիռը: Ես տեսա, թե ինչպես նրանք սևաառնեցին իմ անունը և ցնցվեցի, որովհետև ոչինչ չէի լսում: Սարսափով լի այդ պահին ես նույնիսկ նկատեցի դահլիճի պատերը ծածկող վարագույրների թեթև, հազիվ նշմարելի ծփանքը: Հետո իմ հայացքն ընկավ սեղանի վրա վառվող յոթ երկար մոմերին: Սկզբում նրանք ինձ ողորմածության նշան թվացին, ինձ փրկելու կոչված սպիտակ ու հեզ հրեշտակներ: Բայց հանկարծ սիրտս սկսեց խառնել, մարմինս, ասես գալվանական մարտկոցի դիպչելով, ջղաձգվեց, և այդ նույն հրեշտակները դարձան հրե գլուխներով անմիտ պատկերներ, որոնցից անիմաստ էր փրկություն աղերսելը: Հենց այդ պահին էր, որ իմ ուղեղում գեղեցիկ մեղեդու պես հնչեց գերեզմանի քաղցր անդորրի գաղափարը: Այդ միտքը հանդարտ ու

մեղմորեն թափանցեց իմ հոգին և սպասում էր իր իմաստավորմանը, բայց երբ ես վերջապես լիովին գնահատեցի այն, դատավորների դեմքերը հանկարծ, ասես կախարդանքով, չքացան: Երկար մոմերն անէացան, նրանց բոցը հանգավ, և ամեն ինչ ընկղմվեց թանձր խավարի մեջ: Իմ բոլոր զգացմունքները, հոգուս սրընթաց հոսքի մեջ խեղված, գահավիժեցին սանդարամետի ու դժոխքի գիրկը: Հետո լռություն և անդորր իջավ, և տիեզերական խավարը դուրս մղեց մնացած ամեն ինչ...

Ես ուշաթափվել էի, բայց գիտակցությունս լիովին չէի կորցրել: Թե ինչ էր մնացել նրանից, ես չեմ փորձի ոչ բացատրել, ոչ էլ նկարագրել. բայց ինչ-որ նշույլ մնացել էր: Նույնիսկ ամենախորր քնի մեջ, գառանցելիս, ուշագնաց վիճակում անգամ ամեն ինչ չէ, որ կորչում է, այլապես անմահություն չէր լինի: Նույնիսկ ամենախոր քնից արթնանալով, մենք պատռում ենք ինչ-որ երազի երեբուն ու բարակ ոստայնը: Բայց մի վայրկյան անց (այնքան նուրբ էր այդ քողը) մենք արդեն չենք հիշում այդ երազը: Ուշաթափվածի ուշքի գալն ընթանում է երկու փուլով՝ սկզբում վերականգնվում է հոգևոր կամ մտքի աշխարհը, հետո միայն՝ մարմնականը, այսինքն ֆիզիկական գոյությունը: Եթե մեզ հաջողվեր երկրորդ փուլին հասնելով պահպանել նաև առաջինի հուշերը, ապա մենք պերճախոս վկայություն կստանայինք անդրաշխարհի խորհրդավոր անդունդի մասին: Բայց ի՞նչ է իրենից ներկայացնում այդ անդունդը: Եվ ինչպե՞ս իրարից

տարբերել դրա և մահվան մութ ստվերները: Եթե անհնար է կամովի ետ բերել առաջին փուլի պատկերները, ապա դրանք չե՞ն արդյոք, որ շատ ժամանակ անց չգիտես որտեղից երբեմն անակնկալ այցելում են մեզ: Նա, ով երբեք չի ուշաթափվել, մարող ածուխների մեջ երբևէ դոյակներ ու անծանոթ դեմքեր չի տեսնի, չի գնայլվի օտար ու անծանոթ ծաղիկների բույրով և չի նկատի օդում սավառնող այն տխուր պատկերները, որոնք մատչելի չեն ուրիշներին. այդ մարդը երբեք չի ցնցվի, բազում անգամ լաված մեղեդու մեջ նոր, անծանոթ իմաստ հայտնաբերելով:

Հաճախ, ճգնելով վերականգնել, վերհիշել իմ հոգու թվացյալ անգոյության վիճակը, ես կարծես թե հասնում էի հաջողության: Բազմաթիվ կարճատև պահերի ինձ թվում էր, թե ես ինչ-որ բաներ եմ հիշում, որոնք իմ պարզաջրված դատողությունը հետո վերագրում էր ուշաթափված վիճակիս: Այդ ստվերների մեջ ես հազիվ տարբերում էի ինչ-որ երկար կերպարանքներ, որոնք ինձ բռնած շարունակ ներքև, ներքև ու ներքև էին տանում, մինչև որ այդ անվերջ վայրէջքի մտքից անգամ գլուխս սկսում էր պտտվել: Հիշում եմ նաև այն տարօրինակ երկյուղը, որն իր իսկ անբնական հանգստության պատճառով իջել էր իմ սրտին: Հետո հիշում եմ ամեն ինչին տիրած սարսափելի անդորրը՝ ասես իմ ուղեկիցներն անընդհատ ներքև իջնելով հատել էին անվերջության սահմանը, և, իրենց բեռից հոգնած, կանգ էին առել հանգստանալու:

Դրանից հետո հիշողության մոլեգնող
ցնորք էր միայն, հիշողության, որն անցել
էր թույլատրելիի սահմանը:

Հանկարծ հոգուս մեջ նորից
ներխուժեցին շարժումն ու ձայնը՝ սրտիս
անկանոն զարկերը և նրանց
արձագանքն իմ ականջներում: Հետո
ամեն ինչ կորավ: Հետո ես նորից
ցնցվեցի շարժումից, ձայնից, հպումից:
Հետո, բավական երկար, մնացել էր
սոսկ իմ գոյության գիտակցումը, առանց
որևէ մտքի: Հետո հանկարծ արթնացավ
միտքը՝ վիճակս իմաստավորելու
լարված ու ահավոր մի փորձ, որից
միայն մոռացության իղձը մնաց: Հետո
զգայություններս վերականգնվեցին, և ես
շարժվելու հաջող մի փորձ արեցի: Եվ,
վերջապես, դատը, սև պաստառները,
ուշաթափությունը՝ ամեն ինչ իր տեղն
ընկավ: Դրանից հետո նորից իսպառ
մոռացվեց այն ամենը, ինչ ինձ երկար
ժամանակ անց հաջողվեց վերականգնել
միայն հիշողության համառ ճիգերով:
Առայժմ ես աչքերս չէի բացել: Ջգում էի
միայն, որ կապանքներս արձակված են,
և ես պատկած եմ մեջքիս վրա: Ես առաջ
պահվեցի ձեռքս, և այն դիպավ ինչ-որ
խոնավ ու կոշտ բանի: Ես որոշ
ժամանակ ձեռքս ետ չքաշեցի և
փորձեցի հասկանալ, թե որտեղ եմ և ինչ
է պատահել ինձ հետ: Ես ուզում էի,
բայց չէի հանդգնում բացել աչքերս: Ես
չէի վախենում ինչ-որ ահավոր բան
տեսնելուց, ընդհակառակը, ինձ
սարսափեցնում էր այն միտքը, որ շուրջս
նայելով ես ոչինչ չեմ տեսնի:
Վերջապես, հույսս կորցրած, ես կտրուկ
բացեցի աչքերս: Իմ ամենից սոսկալի
նախագագումն արդարացավ՝ շուրջս

հավերժական գիշեր էր և ուրիշ ոչինչ: Ես շնչահեղձ էի լինում, խավարը ճնշում էր ինձ, օդը թանձր էր ու խեղդող: Անշարժ պառկած, փորձում էի գործի դնել իմ դատողությունը: Փորձում էի վերհիշել հավատաքննության օրենքներն ու կռահել, թե գլխիս ինչ փորձանք է եկել: Դատավճիռը կայացված էր, դրանից հետո կարծես արդեն բավական ժամանակ էր անցել: Ես, իհարկե, չէի կարծում, թե մեռած եմ: Այդպիսի ենթադրություններ հնարավոր են միայն վեպերում և կապ չունեն իրականության հետ: Բայց և այնպես դեռ չգիտեի, թե որտեղ և ինչ վիճակում եմ գտնվում: Ես գիտեի, որ մահվան դատապարտվածներին սովորաբար autodafé^[2] -ի էին ենթարկում՝ այդպիսի մի մահապատիժ կայացել էր հենց իմ դատի օրը: Գուցե ինձ հետ էին բերել, որպեսզի պահեն մինչև հաջորդ, մի քանի ամիս հետո կայանալիք արարողությունը: Ես իսկույն մերժեցի այդ միտքը՝ հավատաքննության զոհերին սովորաբար տեղն ու տեղն էին այրում: Բացի այդ, իմ նախկին խուցը, Տոլեդոյի բոլոր մահապարտների խցերի պես, քարե հատակ ուներ և քիչ թե շատ լուսավոր էր:

Մի նոր, սուկալի միտք ծագեց իմ գլխում, որից սիրտս մի պահ կանգ առավ, և ես նորից ուշաթափվեցի: Ուշքի գալով, իսկույն վեր ցատկեցի և սկսեցի խարխափել մթության մեջ: Ես չէի համարձակվում թեկուզ մի քայլ անել, որովհետև վախենում էի, թե կբախվեմ *դամբարանի* պատերին: Ես ոտքից գլուխ քրտնել էի, քրտինքի սառը կաթիլները պատել էին ճակատս:

Վերջապես լարումն անտանելի դարձավ, և ես, աչքերս չոսած ու ձեռքերս պարզած, զգուշորեն առաջ շարժվեցի, գոնե աղոտ մի լույս նշմարելու հույսով: Արդեն բավական առաջ էի անցել, բայց շուրջս առաջվա պես մութ էր ու դառնարկ: Միրտս մի քիչ թեթևացավ, պարզ էր, որ ես, համենայն դեպս, փրկված էի ամենից գարհուրելի պատժից:

Մինչ ես զգուշորեն առաջ էի ընթանում, միտքս հագար ու մի սարսափելի պատմություններ էին գալիս Տոլեդոյի գնդանների մասին: Ես, իհարկե, առանձնապես չէի հավատում այդ առասպելներին, բայց մարդիկ դրանց մասին միշտ շշուկով էին խոսում: Թերևս ես դատապարտված էի խավարի այս ստորերկրյա աշխարհում սովամահ լինելու: Բացառված չէր նաև, որ ինձ ավելի սուկալի բախտ էր վիճակված: Լավ իմանալով իմ դատավորների վարք ու բարքը, ես չէի կասկածում, որ պիտի մեռնեմ, այն էլ ոչ սովորական ձևով: Ե՞րբ և ինչպե՞ս, ահա թե ինչ էր մտահոգում ինձ:

Վերջապես ձեռքս դեմ առավ ինչ-որ խոչընդոտի: Դա, հավանաբար, քարե պատ էր՝ հարթ, սառը և լպրծուն: Հիշելով իմ լսած որոշ պատմություններ, ես արտակարգ զգուշությամբ շարժվեցի պատի երկայնքով: Շուտով հասկացա, որ նման ձևով հնարավոր չէ որոշել բանտախցի չափը, քանի որ ես հագիվ թե կարողանայի բոլորովին ողորկ պատի վրա գտնել այնտեղը, որտեղից սկսել էի շարժվել: Ես հիշեցի, որ ինձ դատարան տանելու օրը գրպանումս մի դանակ կար, բայց այն չգտա, որովհետև

հագուստս փոխել էին և ինձ կոպիտ կտավից կարված մի շապիկ էին հագցրել: Ես մտադրվել էի դանակը խրել պատի մի որևէ ճեղքի մեջ և նշել այն տեղը, որտեղից պիտի շարժվեի: Սկզբում այդ չնչին դժվարությունն ինձ անհաղթահարելի թվաց, բայց հետո իմ շապիկից մի նեղ շերտ պոկեցի և պատի տակ փռեցի հատակին: Պատի երկայնքով խարխափելով, ես ուզած-չուզած նորից պիտի հասնեի այդ լաթին: Սակայն պարզվեց, որ ես հաշվի չէի առել իմ հյուծվածության աստիճանը և այն, որ խցի հատակը թաց էր ու լպրծուն: Մի քանի քայլ անելուց հետո ես սայթաքեցի և ընկա, այլևս չբարձրացա և տեղն ու տեղը քնեցի:

Երբ արթնացա, կողքիս մի կտոր հաց ու մի կուժ ջուր կար դրված: Ես չափից դուրս տկար էի, որպեսզի զարմանայի, և ազահորեն կուլ տվի հացն ու դատարկեցի կուժը: Քիչ անց ես վերսկսեցի ճամփորդությունը և շուտով մեծ դժվարությամբ հասա իմ թողած լաթի կտորին: Ընկնելուց առաջ ես հիսուներկու քայլ էի արել, իսկ մինչև լաթին հասնելը՝ ևս քառասունութ, այսինքն ընդամենը հարյուր: Երկու քայլը մեկ յարդ հաշվելու դեպքում ստացվում էր, որ իմ խցի շրջագիծը հիշում յարդ է: Քանի որ ճանապարհին ինձ բազմաթիվ անկյուններ էին պատահել, ուստի իմ բանտախցի ձևը հնարավոր չէր ստույգ որոշել (թեև դեռ համոզված էի, որ դամբարան եմ նետված):

Ես որևէ նպատակ, կամ առավել ևս հույս չունեի, բայց աղոտ մի հետաքրքրություն ինձ ստիպում էր

շարունակել գնդանի
ուսումնասիրությունը: Թողնելով պատր,
որոշեցի անցնել գնդանի կենտրոնով:
Սկզբում շատ զգույշ էի քայլում,
որովհետև հատակը սաստիկ լարծուն
էր, բայց հետո սիրտ առա և սկսեցի
ավելի համարձակ քայլել, աշխատելով
ինչքան կարելի է ուղիղ գնալ: Հագիվ էի
մի տասը քայլ արել, երբ շապիկիս
պատռված փեշն ընկավ ոտքիս տակ, և
ես երեսնիվայր փովեցի գետնին:

Ընկնելու պահին ես չէի նկատել մի
արտասովոր հանգամանք, որը քիչ անց
գրավեց իմ ուշադրությունը: Բանն այն է,
որ իմ կզակը հենվում էր գետնին,
մինչդեռ բերանս, քիթս և ճակատս ոչ մի
բանի չէին հպվում, չնայած գտնվում էին
նույն մակարդակի վրա: Բացի այդ,
դեմքս ողողվում էր ինչ-որ թանձր
գոլորշիով, որը բորբոսի հոտ ուներ:
Ձեռքս պարզելով, սարսափած
հասկացա, որ պատկած եմ կլոր մի հորի
եզրին, որի խորությունն այդ պահին
անհնար էր որոշել: Ինձ հաջողվեց հորի
պատը շոշափելով մի փոքրիկ խիճ
պոկել և ցած նետել: Մի քանի վայրկյան
քարն անընդհատ կտկտացնելով
դիպչում էր հորի պատերին, հետո հնչեղ
ճողփյունով մխրճվեց ջուրը: Այդ նույն
պահին վերևից մի ձայն լսվեց, ասես
մեկը արագ բացեց ու փակեց ինչ-որ
դուռ, և խավարի մեջ լույսի մի նեղ շերտ
փայլատակեց:

Ես նոր միայն հասկացա, թե ինչ
բախտ էր ինձ վիճակված, և փառք տվի
պատահարին, որն այդպես տեղին
փրկեց ինձ: Եվս մի քայլ, և ես
հաշիվներս փակած կլինեի այս կյանքի
հետ: Ես մագապուրծ եղա հենց այն

մահից, որի մասին պատմություններն առաջ գրպարտություն ու հերյուրանք էի համարում հավատաքնության հանդեպ: Նրա գոհերը մեռնում էին կամ մարմնական սուկալի խոշտանգումներից, և կամ էլ՝ բարոյական դժոխային տանջանքների ենթարկվելով... Այս վերջինը, երևի, վիճակված էր նաև ինձ: Երկար չարչարանքներից ջղերս բոլորովին քայքայվել էին՝ ես արդեն ցնցվում էի նույնիսկ իմ սեփական ձայնից և ամեն տեսակետից հարմար թեկնածու էի դարձել ինձ սպասող կտտանքների հեղձար:

Մարմնովս մեկ դողալով, ես ետ սողացի, նախընտրելով մեռնել պատի տակ, քան այդ սարսափելի հորում: Ինձ արդեն թվում էր, թե գնդանի ամեն մի անկյունում մի հոր կա: Եթե չլիներ իմ այդ հոգեվիճակը, ես գուցե սիրտ առնեի միանգամից վերջ տալ այդ ողորմելի դրությանը, նետվելով անդունդներից մեկը: Բայց այժմ ես շատ էի ահաբեկված, բացի այդ, հիշում էի այն ամենը, ինչ կարդացել էի այդ հորերի մասին՝ ավա՛ղ, դեռ ոչ ոքի չէր հաջողվել այնտեղ արագ ու անմիջապես մեռնել:

Հուզմունքից ես երկար չէի կարողանում քնել, բայց, վերջիվերջո, մի քիչ նիքհեցի: Երբ արթնացա, տեսա, որ կողքիս առաջվա պես մի կտոր հաց ու մի կուժ ջուր կա դրված: Ես ծարավից մեռնում էի և մի կուժով դատարկեցի ամբողջ կուժը: Հավանաբար ջրի մեջ քնաբեր դեղ էին խառնել, որովհետև խմելուն պես ես իսկույն մի տեսակ թմրեցի և շուտով խոր քուն մտա: Չգիտեմ, թե ինչքան տևեց այդ

մահանման քունը, բայց երբ արթնացա, շրջապատիս առարկաներն արդեն երևում էին: Չգիտես որտեղից հայտնված տարօրինակ ֆոսֆորային լույսի տակ ես հնարավորություն ստացա մանրամասն ուսումնասիրել իմ գնդանը:

Պարզվեց, որ պատերի երկարությունը որոշելիս ես մեծապես սխալվել էի: Նրանց ընդհանուր երկարությունը քսանհինգ յարդից չէր անցնում, և այդ փաստն ինձ շփոթմունքի մեջ գցեց, չնայած նման սոսկալի հանգամանքներում այդ մասին հոգալն առնվազն անմտություն էր: Բայց իմ բորբոքված միտքն այժմ կառչում էր ամեն մի մանրուքից, և ես համատորեն ճգնում էի հասկանալ, թե ինչու՞ն է իմ սխալը: Վերջապես, բավական ժամանակ անց, հանկարծ գլխի ընկա, որ հիսուներկու քայլ հաշվելուց և ընկնելուց հետո, ես ճանապարհը շարունակել էի... հակառակ ուղղությամբ, այնպես որ, սենյակի իրական շրջագիծը փաստորեն կրկնապատկվել էր: Շփոթմունքի մեջ ընկած ես չէի նկատել, որ սկզբում ձախ կողմում գտնվող պատը վերջում հայտնվել էր իմ աջ կողմում: Չնդանի ձևը որոշելիս ես նույնպես սխալվել էի: Մթության մեջ խարխափելով, ես պատերի մեջ բազմաթիվ անկյուններ էի շոշափել և եզրակացրել էի, թե իմ գնդանն անկանոն ձև ունի: Ահա թե ինչպես է խավարն աղճատում խորքից դեռևս ուշքի չեկած մարդու զգայությունները: Պարզվեց, որ այդ անկյուններն ընդամենը աննշան ելուստներ ու փոսեր են եղել, և գնդանն իրականում քառանկյուն ձև ունի: Այն,

ինչ ես քարե շարվածքի տեղ էի դրել, իրականում երկաթի կամ ուրիշ մի մետաղի հսկա թիթեղներ էին, և վերոհիշյալ անհարթություններն առաջացել էին դրանց միացման տեղում: Մետաղե այդ պատերը ծածկված էին կղերականների սնապաշտ ու կոպիտ երևակայության ծնած գարշելի պատկերներով: Այլանդակ կմախքները, սպառնալից դիրքեր ընդունած սատանաներն ու նույնիսկ ավելի զագրելի պատկերներն ամեն կողմից ինձ էին նայում: Ըստ իս, այդ հրեշների ուրվագծերը բավական հստակ էին ու որոշակի, սակայն նրանց գույները խոնավությունից բորբոսանել էին ու խամրել: Ես նաև տեսա, որ գնդանի հատակը քարից է, և այն հորը, որից ես հրաշքով փրկվել էի, գտնվում է կենտրոնում և բարեբախտաբար միակն է:

Ես մեծ դժվարությամբ էի տեսնում այս ամենը, որովհետև քնած ժամանակ մարմնիս դիրքը նկատելիորեն փոխվել էր: Հիմա մեջքի վրա պատկած էի մի ցածր փայտե թախտի վրա, որին պինդ կապված էր գոտի հիշեցնող կաշվե երկար մի փոկով: Այդ փոկը կաշկանդում էր իմ ամբողջ մարմինը, ազատ թողնելով միայն գլուխս և ձախ ձեռքս, որով ես մեծ դժվարությամբ կարող էի հասնել հատակին դրված ուտելիքի կավե ամանին: Ես սարսափով նկատեցի, որ ջրի կուժն անհետացել է: Ասում եմ սարսափով, որովհետև անտանելի ծարավ էի: Երևի իմ կեղեքիչները նպատակ էին դրել ավելի բորբոքել իմ ծարավը, որովհետև

ափսեի մեջ եղած միսը խիստ համեմված էր աղով ու պղպեղով:

Վեր նայելով, ես տեսա գնդանի առաստաղը: Այն երեսուն կամ քառասուն ոտք բարձրություն ուներ և կառուցվածքով նմանվում էր պատերին: Իմ ամբողջ ուշադրությունը գրավեց թիթեղներից մեկի վրայի արտասովոր պատկերը: Դա ժամանակի նկարն էր, ինչպես այն սովորաբար պատկերում են, բայց գերանդու փոխարեն նրա ձեռքին մի բան կար, որն ինձ առաջին հայացքից հին ժամացույցների վրա կախված ճոճանակ հիշեցրեց: Ես ուշադիր նայում էի այդ նկարին (որն ուղիղ իմ գլխավերևում էր), երբ ինձ հանկարծ թվաց, թե ճոճանակը շարժվում է: Հաջորդ պահին ես համոզվեցի, որ դա իսկապես այդպես է: Ես շատ դանդաղ էր շարժվում և խիստ փոքր տատանումներ ուներ: Մի որոշ ժամանակ ես, ավելի շատ զարմանքով, քան վախով, հետևում էի ճոճանակին: Բայց նրա միապաղաղ շարժումն ինձ վերջապես ձանձրացրեց և ես դարձա շրջապատիս մյուս առարկաներին:

Մի թույլ աղմուկ գրավեց իմ ուշադրությունը: Հատակին նայելով, ես տեսա հորից դուրս սողացող հսկայական առնետներին: Մսի հոտից խենթացած, նրանք իրար հրմշտելով մագլցում էին վեր, ագահ հայացքները հառած կողքիս պնակին: Ինձ մեծ դժվարությամբ էր հաջողվում նրանց ետ քշել:

Արդեն կես, կամ գուցե մի ամբողջ ժամ էր անցել (ստույգ ժամանակը հնարավոր չէր որոշել), երբ նորից

նայեցի առաստաղին: Այն, ինչ ես տեսա, ապշեցրեց ու ահաբեկեց ինձ: Ճոճանակի տատանման թափն ավելացել և հասել էր մեկ յարդի: Բնական է, որ աճել էր նաև նրա շարժման արագությունը: Սակայն ինձ հատկապես անհանգստացրեց այն փաստը, որ ճոճանակը զգալի չափով իջել էր: Կարիք կա՞ ասելու, թե ինչպիսի սարսափ պատեց ինձ, երբ ես համոզվեցի, որ ճոճանակի ներքևի մասը պողպատե փայլուն և ածելու պես սուր մի մահիկ էր, որը ծայրից ծայր մոտ մեկ ոտք երկարություն ուներ: Նրա ներքևի ուռուցիկ սուր շեղքը քանի գնում, այնքան ավելի հաստանում ու ծանրանում էր: Ահավոր այդ սարքը կախված էր պղնձե ծանր մի ձողից և սարսուզդու ֆշշոցով տարուբերվում էր գլխիս վերևում:

Հիմա արդեն պարզ էր, թե ինչ վախճան էր ծրագրել ինձ համար կրոնականների դաժան հնարամտությունը: Քննիչները տեսել էին, որ ես գտել եմ հորը, այն հորը, որը նախատեսված էր ինձ նման հանդուգն ընթոստների համար, հորը, որը դժոխքի պատճենն էր, բոլոր սոսկալի պատիժների Ultima Thule-ն^[3]: Ես միայն պատահմամբ էի փրկվել հորից և գիտեի, որ այս գնդանների խոշտանգման հիմնական պայմանը հանկարծակի ու անսպասելի լինելն է: Քանի որ ես ինքս չէի ընկել հորը, ապա ինձ ուժով այնտեղ նետելը նրանց ծրագրի մեջ չէր մտնում, և այժմ ինձ մի ուրիշ, ավելի մեղմ պատիժ էր սպասում: Մե՛ղմ: Ես նույնիսկ քմծիծաղ տվեցի, նման հանգամանքներում գործածելով

այդ բարը: Հարկ կա՞ արդյոք նկարագրել անմարդկային սարսափով լի այն երկար ժամերը, երբ ես, ահից կծկված, հաշվում էի գլխավերևումս սուրացող պողպատի սրընթաց փայլատակումները: Մատնաչափ առ մատնաչափ, այնպես, որ շարժումը նկատվում էր միայն դարերի չափ երկար թվացող միջոցներում, ճոճանակն անողորբաբար ցած էր իջնում ու մոտենում ինձ: Օրեր անցան, անհաշիվ օրեր, մինչև նա ցած իջավ այնքան, որ ես սկսեցի խեղդվել պողպատի բարկ շնչից: Ես աղոթում էի, աղերսում էի աստծուն, որ ճոճանակն ինչքան կարելի է շուտ իջնի: Ես մեկ մոլեգնում, մղվում էի սոսկալի յաթաղանին ընդառաջ, մեկ էլ հանկարծ թուլանում և հանգիստ պատկած նայում էի նրան ու ժպտում, ինչպես երեխան կժպտար մի պսպղուն խաղալիք տեսնելով:

Ես նորից ուշաթափվեցի, այս անգամ կարճ ժամանակով, քանի որ, երբ աչքերս բացեցի, ճոճանակը դեռ շատ չէր իջել: Սակայն, հնարավոր էր, որ ես սխալված լինեի, քանի որ ինձ հետևող հրեշներն, անկասկած, կարող էին այդ ընթացքում դիտմամբ կանգնեցրած լինել ճոճանակը: Բոլոր դեպքերում ես անչափ, ոչ, անասելի թույլ էի ու հոգնած, ասես երկար ժամանակ ոչինչ կերած չլինեի: Նույնիսկ այդ տատապանքի մեջ հողեղեն մարմինս սնունդ էր պահանջում, և ես, մեծ դժվարությամբ, ինչքան որ թույլ էին տալիս իմ կապանքները, ձեռքս պարզեցի և վերցրի առնետների խնայած մսի փոքրիկ կտորը:

Նոր էի միսը բերանս դրել, երբ իմ ուղեղում մի աղոտ ու անսովոր, բայց հույսով լի միտք առկայծեց: Սակայն ինչ գործ ունեի ես հույսի հետ, լինելի՞ք բան էր դա... Ինչպես ասացի, այդ միտքը կիսատ էր, մարդիկ միշտ էլ ունենում են նման մտքեր, որոնք սովորաբար անավարտ են մնում: Ես գգում էի, որ այդ միտքը խնդություն և հույս է ներշնչում, բայց, ավա՛ղ, այն մեռավ դեռ չծնված: Իգուր էի փորձում բռնել ու ետ բերել նրան, շարունակել, խորացնել... Երկարատև տառապանքներն ինձ իսպառ գրկել էին մտածելու կարողությունից ես մի խելապակաս ապուշ էի դարձել:

Ճոճանակը տատանվում էր իմ մարմնի լայնքով, և ես նկատեցի, որ այն ուղիղ սրտիս միջով պիտի անցներ: Սկզբում նրա սուր շեղքը մի թեթև կքավեր շապիկի կտավին, հետո ետ կգար ու նորից կքավեր... հետո նորից ու նորից... Չնայած իր տատանման լայնքին (ավելի քան երեսուն ոտնաչափ) և ահռելի թափին, որը բավական էր գնդանի երկաթե պատերը փշրելու համար, սկզբում ճոճանակը կկտրեր միայն իմ շապիկի կտավը: Այս մտքի վրա ես կարկամեցի ու կանգ առա: Ես չէի⁸⁰ համարձակվում շարունակել: Ես կառչել էի այդ մտքից, կարծես թե կարող էի դրանով նույն մակարդակին պահել ճոճանակը: Ես փորձում էի պատկերացնել սղոցվող կտավի ձայնը և այն, թե ինչպես է մարմինս սարսռալու և փշաքաղվելու այդ ձայնից: Վերջապես այդ մտքերով ես ինձ խելագարության դուռը հասցրի:

Իսկ ճոճանակն իջնում էր ու իջնում, ցա՛ծ, էլի՛ ցած, էլի՛ ու էլի՛... Ես խենթի հաճույք էի ստանում, համենաատելով նրա թափը իջնելու արագության հետ: Աջ, ձախ, հեռու, մոտիկ, վնգստալով, ինչպես մեղսագործները դժոխքում, վագրի դավադիր քայլերով ճոճանակը մոտենում էր սրտիս: Ես մեկ հռհռում էի, մեկ կաղկանձում, նայած թե որ միտքն էր գերիշխում:

Ցա՛ց, անողոր ու անդադար ցա՛ծ: Արդեն երեք մատնաչափ էր մնում, որ այն հասներ կրծքիս: Ես խենթի պես գալարվում էի իմ կապանքների մեջ, փորձելով արձակել գոնե ձախ ձեռքս: Նա ազատ էր միայն արմունկից մինչև դաստակ և դժվարությամբ շարժվում էր կավե ամանի ու բերանիս միջև, բայց ոչ ավելի: Եթե ինձ հաջողվեր ձեռքս ազատել, ես կբռնեի և կկանգնեցնեի ճոճանակը... Նույն հաջողությամբ կարելի էր փորձել լեռան գազաթից սուրացող ահռելի մի ձնակույտ կանգնեցնել:

Ցա՛ծ, շարունա՛կ ցած, նույնքան անողոր, նույնքան անխուսափելի: Ես շնչահեղձ էի լինում, ջղաձգորեն կծկվում էի նրա ամեն մի ճոճումից: Անիմաստ մի անհամբերությամբ ես հետևում էի նրա շարժմանը, ակամա փակելով աչքերս, երբ նրա շեղքն ինձ էր մոտենում: Մահն այդ պահին իսկական փրկություն կլիներ ինձ համար, երանելի՛ մի փրկություն: Այնուհանդերձ մարմնովս մեկ դող էր անցնում, երբ պատկերացնում էի, թե ինչպիսի շնչին ճիգ պիտի գործադրի այդ մեքենան, որպեսզի կուրծքս մխրճի իր փայլատակող կացինը: Բայց և այնպես

կար մի բան, որը ստիպում էր իմ ամեն մի ջիղը, ամեն մի նյարդը հույսից թրթռալ: Դա այն հույսն էր, որը հաղթանակ է տանում նույնիսկ գելարանի վրա, և նույնիսկ հավատաքննության զնդաններում մխիթարության խոսքեր է շնչում դատապարտվածներին:

Ես տեսա, որ մի տաս-տասներկու հարվածից պողպատն արդեն պիտի քսվեր իմ հագուստին: Այդ մտքից ուղեղս միանգամից պարզվեց, և վհատության սատը, սթափ հանգստությունը տիրեց իմ ամբողջ էությանը: Երկար ժամերից կամ նույնիսկ օրերից հետո ես առաջին անգամ սկսեցի մտածել: Ես հանկարծ հասկացա, որ իմ կապանքներն ընդամենը մեկ ամբողջական կտորից են բաղկացած: Ահռելի շեղբի առաջին իսկ հարվածը հեշտությամբ կկտրեր այդ գոտին, և ձախ ձեռքիս օգնությամբ ես իսկույն կազատվեի կապանքներից: Բայց ինչքա՞ն սարսափելի կլիներ այդ դեպքում ճոճանակի մոտիկությունը և ամեն մի շարժում՝ որքան կործանարար: Եվ հնարավո՞ր էր արդյոք, որ դահճիս սատարներն այդպիսի անփութություն թույլ տային: Մի՞թե ճոճանակի ուղին իսկապես հատում էր կապանքներս: Վախենալով կորցնել այդ թույլ և, հավանորեն, վերջին հույսը, ես այնուհանդերձ գլուխս բարձրացրի, որպեսզի ինչպես հարկն է գննեմ իմ կուրծքը: Կաշվե գոտին պինդ գրկել էր ամբողջ մարմինս, բացի այն տեղից, ուր պիտի իջներ մահաբեր մահիկը:

Հագիվ էի գլուխս ետ դրել, երբ ուղեղումս մի նոր միտք փայլատակեց: Ավելի շուտ դա երկրորդ, լրացնող մասն

Էր փրկության այն անորոշ գաղափարի, որի առաջին կեսը ծագել էր իմ գլխում, երբ ես չորացած շուրթերիս էի մոտեցնում ուտելիքը: Հիմա այդ միտքն ինձ ներկայացավ ամբողջությամբ, թեև այն աղոտ էր, հազիվ թե ողջամիտ լիներ և այնքան էլ հստակ չէր: Վհատության տենդագին եռանդից մղված, ես իսկույն գործի անցա:

Ընչաքաղց ու լկտի առնետները վաղուց արդեն վխտում էին իմ թախտի շուրջը: Իրենց կարմիր աչքերը վրաս հառած, նրանք կարծես սպասում էին, որ ես բոլորովին ուժասպառ լինեմ, որպեսզի հոշոտեն ինձ: «Հետաքրքիր է, ի՞նչ են ուտում սրանք այս հորում», ականա մտածեցի ես:

Չնայած իմ ջանքերին, նրանք խժռել էին պնակի համարյա ամբողջ պարունակությունը: Ես ձեռքս անընդհատ տարուբերում էի պնակի վրա, բայց այդ միօրինակ շարժումը շուտով կորցրեց իր ազդեցությունը: Այդ անկուշտ արարածներն այնքան էին լկտիացել, որ հաճախ կծում էին նաև իմ մատները: Ես վերցրի յուղոտ կերակրի մնացորդները, և, որտեղ որ ձեռքս հասնում էր, շփեցի կապանքներիս: Հետո ձեռքս դրի կրծքիս և, շունչս պահած, անշարժացա:

Սկզբում առնետները խրտնեցին այդ անսովոր փոփոխությունից: Նրանք տագնապահար ետ փախան, իսկ շատերը նույնիսկ մտան հորը: Բայց ես գուր չէի ապավինել նրանց ազահությանը: Տեսնելով, որ չեմ շարժվում, մի երկու համարձակ առնետ ցատկեցին թախտի վրա և սկսեցին

հոտոտել ինձ կապող գոտին: Մյուսներն
ասես ազդանշանի էին սպասում՝
առնետների նորանոր հրոսակներ
խսկույն դուրս թռան հորից և նետվեցին
դեպի թախտը: Նրանք կառչում էին
տախտակներից, մագլցում վեր ու
հարյուրներով խլվրտում ինձ վրա:
Ճոճանակի համաչափ շարժումը նրանց
ամեննին չէր անհանգստացնում:
Նրանք ճարակորեն խույս էին տալիս
մահիկի հարվածներից, շարունակելով
կրծել գոտու յուղոտ մասերը: Հարածուն
խմբերով նրանք վխտում էին մարմնովս
մեկ, գալարվում կոկորդիս մոտ, սառը
շուրթերով դիպչում բերանիս, ճնշում
կուրծքս: Միրտս խառնում էր սառը,
մածուցիկ գարշանքից, որի համար այս
աշխարհում անուն չկա: Բայց ես զգում
էի, որ մի վայրկյան անց ամեն ինչ
կվերջանա: Գոտին թուլացել էր, դա
նշանակում էր, որ այն մի երկու տեղ
արդեն պոկված էր: Անմարդկային
ճիգով ես ինձ ստիպում էի անշարժ
մնալ:

Վերջապես իմ ջանքերը
վարձատրվեցին՝ համբերությունս գուր
չկորավ: Ես հասկացա, որ արդեն
ազատ եմ: Կաշվե գոտին ծվեն-ծվեն
կախված էր մարմնիցս, բայց ճոճանակն
արդեն համարյա կրծքիս էր քսվում:
Շապիկիս կտավը պատռվել էր,
պատռվել էր նաև ներքնաշորը, ևս երկու
հարված, և ես քիչ էր մնում ցավից
ոռնայի: Ձեռքի մի շարժումից իմ
փրկիչներն անկանոն փախուստի
մատնվեցին և ես, զգույշ ու սահուն,
կողքի վրա դուրս սողացի
կապանքներիս գրկից: Հիմա ես,
համենայն դեպս առայժմ, *ազատ էի*:

Ազա՛տ— և հավատաքննության ճանկում: Հագիվ էի սարսափի այդ մահճից ոտքս իջեցրել գետնին, երբ դժոխային մեքենան կանգ առավ, և անտեսանելի մի ուժ նրան առաստաղից ներս ձգեց: Այդ դաժան դասը հուսահատությամբ լցրեց սիրտս: Իմ ամեն շարժմանն անկասկած հետևում էին: Ես խուսափել էի մի մահից հանուն մեկ ուրիշի, ավելի սոսկալիի, քան մահն ինքը: Այդ միտքն ինձ ստիպեց անհանգստությամբ գննել գնդանի երկաթն պատերը: Սենյակի տեսքն, անկասկած, փոխվել էր ու արտասովոր դարձել, սակայն առաջին պահին ես չէի ըմբռնել այդ փոփոխության էությունը: Մի քանի վայրկյան ես անկապ ու ունայն ենթադրություններ էի անում, բայց ոչ մի արդյունքի չհասա: Վերջապես հասկացա, թե որտեղից է գալիս գնդանը ողողող խորհրդավոր լույսը: Այն ծորում էր մոտ կես մատնաչափ լայնությամբ մի ճեղքից, որը ձգվում էր գնդանի շրջագծով մեկ և, փաստորեն, պատերն անջատում հատակից: Ես փորձեցի այդ ճեղքից դուրս նայել, բայց, հասկանալի է, ոչինչ չտեսա:

Երբ մեջքս շտկեցի, սենյակի խորհրդավոր փոփոխությունն իսկույն հասկանալի դարձավ ինձ համար: Ես արդեն ասել էի, որ չնայած բավական հստակ ուրվագծերին, գնդանի որմնանկարներն անորոշ ու խամրած գույներ ունեին: Հիմա այդ գույները պայծառացել էին և գնալով ավելի սոսկալի փայլ էին ստանում: Դժոխային այդ պատկերներն այնքան սարսազդեցիկ ու ահարկու էին դարձել,

որ նույնիսկ ինձնից անվրդով մարդը չէր դիմանա այդ տեսարանին: Հագարավոր դիվային աչքեր բոլոր կողմերից, նույնիսկ այնտեղից, ուր առաջ ոչինչ չէր երևում, սպառնում էին ինձ ահարկու բոցեղեն մի փայլով, որն իմ երևակայությունն անկարող էր անհրակյան համարել:

Անհրակա՛ն... շիկացած երկաթի ավելի քան իրական շունչն արդեն այրում էր դեմքս: Ամբողջ գնդանը լցվել էր հեղձուցիչ գոլորշիներով: Իմ տատապանքներին հետևող դևերի աչքերն ամեն վայրկյան ավելի ու ավելի վատվում ու արյունարբու էին դառնում, նրանց արնոտ կերպարանքները սոսկալի բոսորագույն երանգ էին ստացել: Ես խեղդվում էի, շնչակտուր էի լինում: Ահա թե ինչ ոճիր էին նյութել իմ դահիճները, դժոխքի այդ դաժան վիժվածքները: Ես ետ նետվեցի դեպի գնդանի կենտրոնը: Շիկացած պատերի հարևանությամբ հորի խոնավությունը քալասանի պես հովացնում էր սիրտս: Ես ծունկի իջա նրա մահաբեր պռունկի մոտ և ազահորեն ներս նայեցի: Բոցավառվող առաստաղի փայլը լուսավորել էր ամբողջ հորը, և այնուհանդերձ առաջին պահին իմ հոգին մերժում էր ընկալել այն, ինչ ես տեսա... Քիչ անց տեսածիս ահավոր իմաստը վերջապես հասավ, ներխուժեց, դաջվեց իմ սահմնկող գիտակցության մեջ: Աստվա՛ծ իմ, լեզուս չի գորում նկարագրել տեսածս... Ի՛նչ գարշելի, հրեշավո՛ր բախտ... Ես սուր ճիշով ետ մղվեցի հորից, և, դեմքս ձեռքերիս մեջ թաղելով, աղեկտուր լաց եղա:

Շոգը քանի գնում սաստկանում էր և ես, տենդից դողալով, նորից բացեցի աչքերս: Մի նոր, այս անգամ ձևի փոփոխություն էր տեղի ունեցել գնդանում: Ինչպես և անցած անգամ, սկզբում ես չհասկացա, թե ինչ է կատարվում: Բայց իմ տարակուսանքը երկար չտևեց: Երկրորդ անգամ խույս տալով պատժից, ես բորբոքել էի հավատաքննության վրեժխնդրությունը, և ⁸⁴Մահվան Արքան այլևս պահմտոցի չէր խաղում: Ժամանակին գնդանը քառակուսի էր: Այժմ երկաթե երկու անկյուն սրվել էին, իսկ մյուս երկուսը՝ համապատասխանաբար բթացել: Այդ սարսափելի փոփոխությունը շատ արագ էր կատարվում և ուղեկցվում էր սոսկալի ճոխնչով ու որոտով: Մի վայրկյանում քառակուսի գնդանը դարձավ շեղանկյուն, բայց փոփոխությունն այդ բանով չավարտվեց: Ասենք, ես ոչ հույս ունեի, ոչ էլ ուզում էի, որ այն ավարտվեր: Ես արդեն պատրաստ էի հավերժական անդորրի կարմիր պատանքի պես կրծքիս սեղմել գնդանի շիկացած պատերը: «Մա՛հ» — աղերսում էի ես, — «ի՛նչ մահ ուզում է լինի, միայն թե ոչ հորում»... Հիմա՛ր: Ինչպես չէի հասկացել, որ շիկացած պատերի նպատակն ինձ հենց հորի մեջ գցելն էր: Ես ինչպե՞ս դիմանայի այդ դժոխային տապին, և եթե նույնիսկ դիմանայի, կարո՞ղ էի արդյոք դիմադրել պատերի սոսկալի ճնշմանը: Ամեն վայրկյան շեղանկյունն ավելի ու ավելի էր սեղմվում, մտածելու ժամանակ չթողնելով: Նրա կենտրոնը և, իհարկե, ամենից լայն մասը համընկնում է հենց հորի լայն բացված երախի հետ: Ես հետ

մղվեցի, բայց իրար ծավլող պատերն
ինձ անգթորեն առաջ էին հրում: Ի վերջո
իմ խանձված ու ջղածգվող մարմնի
համար գնդանի հատակին մատնաչափ
տեղ էլ չմնաց: Այլևս չէի դիմադրում, իմ
հոգեվարքը վերջապես լուծվեց մի
երկա՛ր, բարձր ու հուսաբեկ ճիչով: Ես
երերացի, հայացքս ահով շուռ տվի և...

Մարդկային ձայների խառնաշփոթ
աղմուկ լսվեց: Մի տեղ, ասես
միանգամից, բազում շեփորներ հնչեցին
և հագա՛ր ամպրոպ դղրդաց: Հրե
պատերը նահանջեցին: Ինչ-որ մեկը
բռնեց իմ ձեռքը, երբ ես, գիտակցությունս
կորցնելով, գահավիժում էի անդունդը:
Դա գորավար Լասալն էր:
Ֆրանսիական բանակը գրավել էր
Տոլեդոն: Հավատաքննությունն ընկել էր
իր թշնամիների ձեռքը:

1. ↑

Խոշտանգում էր մեզ չարագործների ոհմակը երկար

Եվ անմեղների արյունը ծծում:

Ազատ է հիմա հայրենիքը մեր, չարի բերդն ընկած

Եվ, մահին հաղթած, բարիքն ու կյանքն են այստեղ թևածում (լատ.):

2. ↑ Հրկիզում (պորտ.):

3. ↑ Ծայրագույն սահմանը (լատ.):

About this digital edition

This e-book comes from the online library [Wikisource](http://wikisource.org)^[1]. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the [Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported](http://creativecommons.org/licenses/by-sa/3.0)^[2] license or, at your choice, those of the [GNU FDL](http://www.gnu.org/copyleft/fdl.html)^[3].

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at [this page](#)^[4].

The following users contributed to this book:

- GeoO

-
1. [↑ http://wikisource.org](http://wikisource.org)
 2. [↑ http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0](http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0)
 3. [↑ http://www.gnu.org/copyleft/fdl.html](http://www.gnu.org/copyleft/fdl.html)
 4. [↑ http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium](http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium)